

ՀԱՅՀ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԽԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱՑԱՆ

ԽՐԵԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ - ԳՐՔՈՒՅՆ № 2

ՍԻՄՈՆՈՎ, Ա. Ն.

Վ. Ա. Յ Բ Ի Գ Ա Լ Ե Գ Ա Յ Բ
Ս Ե Բ Մ Ե Բ Ի Հ Ա Վ Ա Ք Ը

1

633
Ս-50

ԳՅՈՒՂ.ՀՐԱՏ

1936

ՅԵՐԵՎԱՆ

31 JUL 2013

18534

24 SEP 2010

633

V-50

ԱՐ ԳԱԼԵԶԱՆ՝ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՇՏԵՐԸ

Արևելյան գալեզան կամ այծուկը—կերային նոր կուլտուրա յեւ Գիտությունն ախ քիչ եւ ուսումնաօբրել խոկ արտադրությունը զեռ բոլորովին չի յուրացը ել Արևելյան գալեզայի կուլտուրայի վերաբերյալ կատարված մի քանի փորձերը ցույց են տալիս, վոր ալդ միանգամայն արժեքավոր բույս ե, վորը կոլտնտեսային անտանապահությանը մեծ ոգուած կարող ե բերել:

1910
4025

Այդ բույսը բազմամյա լի, թիթեռնածաղկազգիների (բնդավորների) ընտանիքից։ Մի անգամ ցան լածը կարող ե տալ տնտեսապես արժեքավոր սերմերի կամ խոտի բերք 8—10 տարվա տևողությամբ։ Մուկվայի մարզի պայմաններում յերկորդ տարվանից սկսած ամառը կարող ե տալ շրաբ։



Ամբազիք Ս. Խաչակրան, նշ. Մալաթյան
Քարգմ. Մ. Ավետիսյան
Արքազբէ՛ Պ. Սարգսյան
Կատվիտի լիտոգր. Ա 1628
Հրտա. Խ 368
Տիրած 1500
Պատվիք Խ 577
Հանձնվել և որոշվարաբյան 22/VIII 1939 թ.
Սառարդության և տպագրելու 8/IX 1939 թ.

Գյուղերատի տպարան, Նուբանդյան Խ 11, Եկեղեց

և զտրգանում: Բացի այդ, արևելյան գալեգան դիմացկուն ե ցրտահարության, քրտնահարության, հիվանդությունների և վնասատուների հանդեպ:

Գալեգան տալիս ե բարձրորակ խոս, վորն իր մննդարժեքով և մարսելիությամբ չի զիջում լավագույն ընդավոր բույսերի խոտին, ինչպիսիք են լեռեքնուկը և առվուտը:

Գալեգալի կանաչ բույսը կարելի յե սգտագործել վորպես լրացուցիչ կանաչ կեր բոլոր տեսակի անասունների համար, և վորպես հում մասսա՝ վաղ ոգտագործելի բարձր մննդարժեք ունեցող (առանձնավես սպիտակուցի տեսակետից) սիլոս պատրաստելու համար:

Արևելյան գալեգան, ինչպես և մյուս ընդավոր բույսերը, հանդիսանում ե լավ աղոտ կուտակող: Գալեգալի յուրաքանչյուրը բույսի տրմատներում հայտաբերվել են 240-ից մինչև 300 հատ տարբեր մեծություն և ձևի պայառիկներ:

Այդ պտղարիկներում գտնվում են պալարաբակտերիաներ, վորոնք ոգտագործում ե կուտակում են ողի ազոտը:

ԳԱԼԵԳԱՅԻ ՊԱՀԱՆՁԸ ՀՈՂԻ ՑԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՆԿԱՏՍԱՄԲ

Արևելյան գալեգան բնական պայմաններում առավելապես աճում և զարգանում ե հումուսով հարուստ անտառալին հողերում:

Կուլտուրական ցանովի պայմաններում նա լավ բերք ե տալիս սեահողերում, ծանր և թխե կավաալազանողերում: Յենթաավազային և ավազային հողերում գալեգան թեկուզ և աճում ե, բայց բերքատվությունն զգալիորեն ավելի քիչ ե:

Գալեգան յուր նորմալ զարգացման համար պահանջում ե բավականաչափ, բայց վոչ առատ խոնավություն:

Համար մեր զիտողությունների, ցածրադիր տեղերում, վորտեղ ստորերկրյա ջրերը բարձր են կանգնում (50—70 սմ) գալեգայի

գարզացումը խիստ գանդաղում ե, իսկ մի
շաբք գեղքերում նա յիանգամյան վոչչա-
նում ե: Դրա համար ել գալեզայի փորձ-
նական ցանք կատարելու համար հողամա-
սեր պիտի ընտրել հնարավորին շափ ավելի
բարձրադիր, հավասար ուղիղ ունեցող
տեղերում, առանց խորդուբորդություն-
ների:

Տաքությունը գալեզայի վրա զգալիու-
րեն ավելի լավ ե ազգում, քան յերեքնու-
կի վրա: Տաք որերին գալեզայի աճման և
զարգացման թափն ավելի ուժեղ ե, քան
յերեքնուկինը:

ԻՆՉՊԻՄ ՓՈՐՁԵՐ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԴՆԵԼ ԳՈԼԵԳԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արեւելյան գալեզան նոր կերային բույս
ե: Դրա համար ել առաջին հերթին հարկա-
վոր ե լուծել նրա տնտեսական արժեքի
հարցը Միության տարբեր շրջանների հա-
մար՝ համեմատելով մյուս ընդավոր խոտա-
բույսերի հետ: Փալեղայի համեմատական
փորձարկումը մյուս ընդավորների հետ ան-

հրաժեշտ և կատարել ըստ հետևյալ հատկա-
նիշների:

1) Նրա կանաչ մասսալիք և խոտի բերքը
մի հեկտարից:

2) Թե ինչ չափով ուտելի յե կենդա-
նիների համար վորակես կանաչ և վորակես
խոտ:

3) Վերաճման արագությունը գարնանը
և քողելուց հետո:

4) Դիմացկունությունը ցրտահարու-
թյան դեմ:

5) Դիմացկունությունը չորայնության
գեմ:

6) Կայունությունը հիվանդություն-
ների և վնասատուների դեմ:

Խորհրդայիս Միության տարրեր շրջան-
ներում գալեզան պետք ե փորձարկել հա-
մեմատելով մեկ քաղ տիզող կարմիր յերեք-
նուկի հետ:

Խորհրդային Միության հարավային
մարզերում (վորտեղ մանում ե նաև Անդրբ-
կովկասը), գալեզայի համեմատական փոր-
ձարկումը հարկավոր ե կատարել յերկրադ

կարմիր լեռեքնուկի, առվույտի և կորնգանի հետ։ Յերեքնուկից և առվույտից պիտի վերցնել այն տեսակները (սորտերը), վորոնք մշակվում են տվյալ շրջանում։ Պակաս կարեւ վոր չե նաև պարզել, թե ինչպես ե ազդում ցանելու ժամկետը գալեզայի սերմերի, խոտի բերքատվության և նրանց վորակի վրա։

Ցանքի լավագույն ժամկետները վորոշելու համար փորձերը դրվում են հետևյալ սխեմայով։

Փորձահողամասեր

ցանք

Առաջին փորձահողամաս . . .	տպրի /ի 15. ին
Յերկրորդ . . .	մայիսի 15. ին
Յերրորդ . . .	հունիսի 1-ին
Չորրորդ . . .	սպոտոսի 1. ին
Հինգերորդ . . .	սեպտեմբերի 1. ին
Վեցերորդ . . .	նոյեմբեր-դեկտեմբերին

Փորձնական ցանք կատարելու համար պետք ե ընտրել հավասար մակերես ունեցող հողամաս։ ավելի լավ կլինի, յեթե այդ հողամասը մի քիչ բարձրադիր լինի։ Անցած տարիների պարաբացումը և նախորդող

կուլտուրաները բոլոր փորձահողամասերի համար պիտի լինեն միատեսակ։

Առաջին և յերկրորդ փորձահողամասերի տարածությունը պետք է լինի 50 քառ. մետր (մի հեկտարի 100-րդի կեսը)։ Փորձահողամասի յերկարությունը պետք է լինի 25 մետր, լայնությունը՝ 2 մետր։

ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Գալեզալի փորձնական ցանքի համար անհրաժեշտ ե հողը նախապատրաստել աշնանից և վորքան շուտ, այնքան լավ։ վաղ աշնանավար կատարելիս հողում ավելի շատ աննդանյութեր են կուտակվում։ Հենց վոր փորձնական ցանք կատարելու համար նախատեսված հողամասերից բերքը կհավաքվի, հարկավոր ե հողը յերեսանց վարել (փխրողով) և այդ գրությամբ թողնել մինչև աշուն։ Աշնանը հողը վարվում է 18—20 սմ խորությամբ։ Վարված հողն առանց փոցինելու մոււմ և մինչև գարուն։ Գարնանը, հենց վոր կարելի կլինի դուրս գալ դաշտ, պետք

և աշնանահերկը իննամքով ցաքանել: Յեթև
աշնան վարած հողամասը ձմբանն ուժեղ
կերպով պնդացել ե, այդ գեպըում ցանե-
լուց առաջ անհրաժեշտ և հողը փխրել կուր-
տիվատորով և փոցխել թեթև փոցխով:

Նկատի ունենալով, վոր գալեզան բազ-
մամյա բուլս ե, ավելի լավ և փորձնական
ցանքի համար հողամաս հատկացնել ցան-
քաշը ջանառությունից դուրս մի հողամա-
սում:

ՍԵՐՄԵՐԸ ՅԵՎ 8ԱՆՔԵՐԸ

Գալեզայի չմշակված սերմերն ունեն
ցածր ծլուսակություն (8.ից մինչև 35%),
դրա համար ել ցանելուց առաջ անհրաժեշտ
և ամուր քաթանի պարկի մեջ գետի խոշոր
ավազով տրորել 30 րոպե: Ալդպիսի մշակ-
ման հետևանքով գալեզայի սերմերի ծլու-
նակությունը բարձրանում է մինչև 80—
98%:՝

Գալեզայի համեմատական փորձար-
կումը մլուս ընդավոր խոտաբուխերի հետ

հարկավոր և կտաարել ապրելի լերկություն
կլիմին:

Ցանքի լավագույն ժամկետը ահմա-
նելու փորձը կարելի յե դնել աշնանից,
սկսելով ողոստոս ամսից (1.րդ, 5.րդ և 6.րդ
փորձահողամասերում:)

Շարքերի միջև լայնությունն ինչպես
առաջին, այնպես ել լերկուրդ փորձերի
ժամանակ պետք ել լինի 25 սմ: Սերմա-
ցուի նորմաները՝ գալեզայի համար՝ մի հեկ-
տարին 20 կգ (50 քառ. մետրանոց փոր-
ձահողամասի համար 100 գ), լերեքնուկի
համար՝ հեկտարին 6 կգ (50 քառ. մետրա-
նոց փորձահողամասի համար—30գ), առ-
վույտի համար—հեկտարին 12 կգ (50 քառ.
մետրանոց փորձաբաժնի համար—60 կգ *):
Գալեզայի, յերեքնուկի, առվույտի սերմերը
ծածկվում են 2—3 սանտիմետր խորու-
թյամբ՝ նայած հողին և նրա խոնավությանը:
Ցանքը կատարվում է շարքացանով:

*) Կորնգանի համար՝ հեկտարին վորկույղով
90—100 կգ, առանց վորկույղի 60—70 կգ նա-
յած հողին, կլիմային, մշակելու և ցանելու սի-
տեմին:

ՑԱՆՔԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Սերմերը ցանելու տարին փորձահողամասերի խնամքը մոլախոտեր հեռացնելն ե քաղհանի և փխրեցման միջոցով։ Քաղհանը և փխրեցումը կատարվելու յե լերկու անգամ։ Առաջինը՝ ծիւերի լրիվ դուրս գալուց 15—20 որ հետո։ Յերկրորդ անգամ՝ առաջին քաղհանից 20—25 որ անց։ Ցանքի լերկուրդ և հաջորդող տարիներին փորձադաշտերի խնամքը գարնանը, հենց գոր կարելի կինի դաշտ դուրս գալ, յերկու հետք շաբքերի յերկարությամբ ցաքանելն ե, իսկ այն գեպօւմ, լերը մոյախոտերը շատ կան, անհրաժեշտ ե կատարել ձեռքով փխրեցում։

ԴԻՏՈՂԻԹՅՈՒՆՆԵՐ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՑԱՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՆ

Փորձնական ցանքերի բույսերի զարգացման վերաբերյալ հարկափոր ե կատարել զիտողություններ։ Դրա համար անհրաժեշտ ե կազմել զիտողությունների տես-

բակ և նրա մեջ կատարել հետևյալ գրանցումները՝

1. Յերբ ե կատարված ցանքը։
2. Յերբ են դուրս լեկել լիակատարծիլերը, նրանց դուրս գալու բնույթը (հավասար, միատեղ են դուրս լեկել, թե տարբեր ժամանակներում)։
3. Յերբ ե սկսվել և վերջացել կոկոնների կազմվելը։
4. Յերբ ե սկսվել և վերջացել ծաղկումը։
5. Յերբ ե սկսվել սերմերի սաղմակարումը։

6. Յերբ են հասել սերմերը։
7. Յերբ ե կատարվել սերմերի կամխոտի բերքահավաքը։ Անհրաժեշտ ե նույնպես գրանցել, թե զյուղատնտեսական տարբեր տեսակի անասուններ ինչպես են ուտում գալեգալի կանաչ մասսան և խոտը ուայն համեմատել մլուս խոտաբուլսերի ուտելվության հետ։

Անհրաժեշտ ե նշել նաև հիվանդությունների և զնասատունների լերեալու-

Ժամանակն ու բնույթը Այս հարցերի առթիվ հարկավոր ե խորհրդակցել տեղական մասնագետների (գյուղատնտեսի, մարդագետնաշխարհի և այլն) հետ և աշխատել վորոշել միջատների կամ հիվանդությունների անունները:

Գալեգայի աճման և զարգացման արագությունը (մյուս լնդավոր բույսերի հետ համեմատած) վորոշելու համար յուրաքանչյուր փորձահողամասում հարկավոր ե առանձնացնել 10 հատ բույս, հատուկ նշան գնել և 10 որը մեկ անգամ չափել նրանց աճը:

Գալեգայի, յերեխնուկի, առվույտի և կորնգանի դիմացկունությունը ցրտահարության հանդեպ վորոշվում ե այսպես. ձմեռնամտից առաջ փորձահողամասի միջակ զարգացած շարքերից մեկի վրա յերկու ցցով առանձնացվում ե $1/2$ մետր տարածություն. վորի վրա հաշվում են բույսերի և նրանց ցողունների քանակը և այդ բոլորն արձանագրվում ե տետրակում: Հաջորդ տարվա գարնանը, հենց վոր բույսերը կկազդուրվեն և կակսեն աճել, նորից կատարվում ե հաշ-

գառում նշված կես մետրանոց շարքում և բույսերի քանակության տարբերության հիման վրա դատում են նրանց ցրտահարվածության աստիճանի մասին:

Եերաշտի (չորության) աղդեցութլունը վորոշվում ե աշքաչափով:

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ ՅԵՎ ԲԵՐՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Գալեգան խոտի համար կարելի յն հնձեկ մոտավորապես նրա ծաղկելու սկզբին: Այդ ժամանակաշրջանում նրա ցողունները զերևս խիստ կուլտացած չեն լինում և ստացվում ե լավորակ խոտ: Գալեգան քաղվում ե հողի մակերեսից 5—7 ամ բարձրությամբ:

Գալեգայի սերմերի հասունացած լինելը սերմահավաքի համար կարելի յե վորոշել նրա ունդի փեղկերի (պատիճի) գույնով: Հենց վոր սերմերը հասունանում են, ունդի փեղկերը դառնում են մուգ-դարչնագույն, տակայն նկատի ունենալով, վոր գալեգայի սերմերը նրա վնշերի վրա հասունանում

են անհավասարաչափ, դրա համար ել՝ հասած սերմերի թափելը կանխելու համար՝ չպետք ե սպասել, վոր բոլոր ունդերի կձեռպը դառնա մուգ-դարչնագույն։ Գալեզայի սերմերի հավաքը կարելի յե կատարել այն ժամանակ, իերբ ունդերի $40-50^{\circ}/_0$ -ի կճ. պղը մուգ-դարչնագույն ե, $15-30^{\circ}/_0$ -ը՝ կանաչ դարչնագույն, $30-35^{\circ}/_0$ -ը՝ բաց-դարչնագույն։

Առվուլուը վորպես խոտ քաղվում ե ծաղկման սկզբին, իսկ վորպես սերմացու՝ յերբ բոլոր բուլսերի ունդերի $\frac{3}{4}$ -ը մուգանում ե։ Նույնը վերաբերվում ե կորընզանին։

Յերեքնուկը խոտի համար քաղում են ծաղկելու սկզբին կամ կիսին, վորպես սերմացու հավաքում են այն ժամանակ, յերբ մուգանում ե գլխիկների մեծագույն մասը և նրանց մեջի սերմերը պնդանում են։ Յուշաքանչյուր փորձահողամասից ստացված կանաչ մասսան, խոտը և սերմերն անհրաժեշտ ե հաշվի առնել առանձին առանձին։

Յեթե հնարավոր չե փորձահողամասի ամբողջ կանաչ մասսան կշռել, կարելի լի

վարփել այսպես. յուրաքանչյուր փորձնահողամասից ընտրել միջակ զարգացած խոտակազմ ունեցող մի շարք, քաղել այն մանգաղով և նույն տեղում հենց հում դրությամբ կշռել. Մի շարքի կանաչ մասսայի քաղը բազմապատկել փորձահողամասերում յեղած շարքերի քանակով և ալդ ձեռով ստանալ առողջ փորձահողամասերի վրա լեզած հում մասսայի քանակությունը։ Հետո, յուրաքանչյուր փորձահողամասի յուրաքանչյուր շարքից ստացված և կշռված կանաչ մասսան չորացնում են արդի տակ, իսկ յեթե յեղանակն անձրեալին ե, ծածկի տակ այնքան ժամանակ, մինչև վոր մասսան ամբողջապես կչորացնա և մի քանի անգամ իրար հետեւց կշռելիս նրա կշիռը չի պակասի, կդառնա անփոփոխ։

Խոտը վերջին անգամ կշռելիս ստացված թիվը բազմապատկում են յուրաքանչյուր փորձահողամասի շարքերի թվով և այս ձեռով իմանում են փորձահողամասից ստացված չոր խոտի քաշը։

Յուրաքանչյուրի հեկտարից ստացված հում կանաչ և չոր մասսալի քաշն խմանալու համար լուրաքանչյուր փորձահողամասից (50 քառ. մետր) ստացված քաշը հարկավոր և բաղմապատկել 200-ով (մի հեկտարը 10.000 քառ. մետր է):

Յուրաքանչյուր փորձահողամասից ստացված սերմը կալսվում և կշռվում եւ առանձին:

Ամեն տարի բերքահավաքից անմիջապես հետո պետք եւ լրացնել գրքույկին կցված անկետան և ուղարկել Հանրապետական անասնաբուժական փորձակայանի փորձարկման բաժիննշված հասցեյով. փորձարկման հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ հարկավոր եւ դիմել մեզ:

Առաջին տարվա փորձադրման վերաբերյալ՝ ուղարկվում եւ առաջին անկետան, լերկորդ տարվա վերաբերյալ՝ յերկրորդ անկետան, լերկորդ տարվա վերաբերյալ՝ յերրորդ անկետան: Իսկ հետագա տարիներին՝ լերրորդ անկետան հետո:

ԳՈ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏԵՂ. ՊԵՏ. ԲԱՑԱԿՈՒՅՈՒՆ
ՀՅԱՀ-ՀՀՊՀ

ԱՐՁԵԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՈՒՃԱԴՐՈՒԹՅԱՆ

Հանրապետական Անասնաբուժական փորձակայանը խրճիթ-լաբորատորիաներին մեթոդնական զործնական խորհուրդներով, անասնաբուժության և կերահայթայթման հարցերի վերաբերյալ ցուցմունքներով ոգնելու նպատակով Գյուղհիբատի հետ կազմում եւ լույս եւ ընծայում մատչելի գրքույկներ:

Գրքույկները մեծ մասամբ ունենալու յեն հրահանգների բնույթ, վորոնց մեջ լուսաբանվելու յեն փորձեր կատարելու նպատակը, փորձերի կազմակերպման տեխնիկան և հետազոտական դիտողությունների հաշվառման ձեռքը:

Յեթե կլինին կորոնտեսություններ և խրճիթ-լաբորատորիաներ, վորոնք ցանկութուն կունենան անասնապահության և կերահայթայթման հարցերի շուրջը նոր փորձեր գնել և այդ ուղղությամբ հետազոտություններ կատարել, խնդրում ենք այդ մասին հայտնել փորձակայանի կոլտնտեսական փորձարկման բաժնին՝ անհրաժեշտ մթողական ցուցմունքներ:

Մեր հասցեն՝ Յերեան բանգրանքան՝ թիւ 30, Հանրապետական փորձակայանի կուտակութական



ՀՀ Ազգային գրադարան

NL0287607

623

18534

20 կոմ.



С. Н. СИМОНОВ

Сбор семян
дикорастущей галеги

Сельхозиздат 1936 Ереван